ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.03.2014թ.
214-ի 2

"Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն պարոն Արթուր Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

"Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" ՊՈԱԿ-ը հայտարարել է գլխավոր մասնագետի, գնումների եւ պայմանագրերի կառավարման ղեկավարի, տեղամասային ինժեների, ավագ տեղամասային ինժեների, իրավական հարաբերությունների խորհրդատու/գլխավոր իրավաբանի, ֆինանսատնտեսական ղեկավար/գլխավոր հաշվապահի, հաշվապահական հաշվառման եւ վճարումների մասնագետի, տրանսպորտային ոլորտի ինժեներ/տնտեսագետի, պայմանագրերի կառավարման մասնագետի, բողոքների եւ վեճերի կառավարման մասնագետի, կարողությունների զարգացման, մոնիտորինգի եւ արտաքին կապերի ղեկավարի թափուր պաշտոնները զբաղեցնելու հրավեր (http://www.northsouth.am/am/careers/show/10): Հայտ ներկայացնելու վերջնաժամկետ սահմանվել է 2014թ.-ի մարտի 21-ը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ մարդ է հայտ ներկայացրել վերոնշյալ յուրաքանչյուր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար,
2. Ովքե՞ր են դիմել վերոնշյալ յուրաքանչյուր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար (դիմած անձանց անունները, ինչպես նաեւ ներկայումս զբաղեցրած պաշտոնը, եթե կա այդպիսին),
3. Ե՞րբ է հայտնի լինելու, թե ովքեր են զբաղեցրել վերոնշյալ թափուր պաշտոնները:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան